

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«Միսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՉԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝ ԽՄԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԵՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսուցիչ՝ Լուսինե Դավթյան

Դեկավար՝ Սվետլանա Սարգսյան

Երևանի Մուշեղ Միսոյանի անվան հ.68 հիմնական դպրոց

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....	4
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ.....	6
ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....	7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եթե բժշկի կամ իրավաբանի կամ Էլ ատամնաբույժի կաբինետում միաժամանակ հավաքվեն 40 մարդ տարբեր ցանկություններով և տարբեր պահանջմունքներով, մի մասն Էլ չունենա այնտեղ մնալու ցանկություն և խանգարեին իրականացվող աշխատանքները, և այդ ժամանակ Էլ բժիշկը, իրավաբանը կամ ատամնաբույժը օգտագործելով իր ողջ վարպետությունը 9 ամսվա ընթացքում հասնի բարձր մասնագիտական արդյունքների՝ այդ ժամանակ նրանք կունենան որոշակի պատկերացումներ դպրոցի ուսուցչի աշխատանքի մասին:

Դոնալդ Կուլինս

Ենթաթեմա ` <<Կենսագործունեության գործընթացների կարգավորումը>> թեմայի ուսումնառության ժամանակ ծագող խնդիրների հաղթահարումը և նյութի դյուրին ընկալումը խմբային մեթոդի օգնությամբ:

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում միշտ բախվել եմ 8-րդ դասարանցիների կողմից կարգավորման գործընթացի , նյարդային և հումորալ համակարգերի հետ կապված նյութի ընկալման հետ կապված բազմաթիվ բարդությունների հետ ,որն Էլ պատճառ հանդիսացավ փորձել այդ նյութի մատուցման համար փնտրել նոր եղանակներ:

Ծագող խնդիրներից Է նոր եզրույթների մեծ քանակությունը , նյութի բարդությունը ,դասարանում աշակերտների մեծ թիվը ,որոնք իրարից տարբերվում են և՛ սովորելու ցանկությամբ, և՛ կարողությունների առումով, ինչպես նաև ունեցած գիտելիքների քանակությամբ: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված Է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Դասարանում ուսուցանվողները շատ տարբեր են, այդ պատճառով շատ կարևոր Է դասի վարման մեթոդի ճիշտ ընտրությունը:

Գրական ակնարկ

Մենք հաճախ ենք օգտագործում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը:

Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Նմանատիպ ձևով մեկ դասի պարագայում այլ կերպ է քան մի ուրիշ: Հետևաբար ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Ուսուցչի կողմից դասավանդման մեթոդների ճիշտ ընտրությունը արդյունավետ մանկավարժական գործունեության խնդրի կարևորագույն կողմերից է :

Դասավանդման մեթոդները փոխկապակցված են: Օրինակ՝ բանավոր ներկայացված մեթոդը հաճախ զուգակցվում է քննարկման և ցուցադրման մեթոդի հետ: Դասի արդյունավետությունը կախված է մեթոդների գրագետ օգտագործումից: Ժամանակակից ուսուցումը պահանջում է այնպիսի մեթոդների կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ նաև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքների ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդը սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ: Նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է: Ելնելով վերը նշվածներից որոշեցի հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել խմբային ուսուցում:

Խմբային ուսուցումը հնարավորություն է տալիս, որ սովորողը ձեռք բերի ինքնուրույնություն և զարգացնի սեփական հմտությունները: Նպաստում է մտածողության զարգացմանը, ձևավորում ճկուն միտք: Խմբային ուսուցման համատեղումը այլ մեթոդների հետ կարող է դառնալ խնդիրների լավագույն լուծումներից մեկը: Դասընթացի կազմակերպման ընթացքում ստեղծվեցին ժամանակավոր փոքրիկ խմբեր, որոնք միահամուռ կերպով առաջադրված թեմայի շուրջ աշխատում էին ինքնուրույն: Խմբային ուսուցման մեթոդի կարևորագույն փաստն այն է, որ ուսուցիչը երկրորդ պլանում է, որպես մասնակից: Աշխատանքի շուրջ ներառված յուրաքանչյուր մեկը՝ դասավանդող, սովորող, ծնող, սկզբունքորեն իրավունք ունի դասընթացի բովանդակային որոշումներում, աշխատանքի արդյունքների կազմակերպման և այն ներկայացնելու գործում իրենց առաջարկն ունենալ, որը սովորողին ինքնուրույն է դարձնում ընդհանուր և ստեղծարար գաղափարներում: Խմբային ուսուցումը, ելնելով իր կառուցվածքից, կարող է մի քանի գործառույթներ իրականացնել, որոնք ակնհայտ կերպով դասարանային ուսուցման շրջանակներում սահմանափակ են: Խմբային ուսուցման ժամանակ ավելի շատ սովորողներ կարող են մասնակցել դասընթացին, քան դասարանային ուսուցման ժամանակ, կարող են թիմային մտածելակերպ ձևավորել և այն զարգացնել խմբում, կարող են ինքնուրույն աշխատել, կարող են ուսուցչի կողմից նոր թեմայի վերաբերյալ չնախատեսված տեսակետներ առաջ քաշել և աշխատել դրա շուրջ:

Խմբային ուսուցումը թույլ է տալիս ուսուցչին իր սովորողներին հստակորեն, ավելի պարտավորված կերպով տարբեր դերերում հետևել, քան դասարանային ուսուցման պարագայում է: Միաժամանակ պետք է նշել, որ խմբային ուսուցումը ավելի շատ ժամանակ է

պահանջում, քան դասարանային ուսուցումը, քանի որ սովորողներին ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ առաջադրված աշխատանքը , խնդիրը լուծելու համար: Խմբային աշխատանքի թերություններից է նաև այն, որ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը շատ ցածր է և այստեղ ուսուցչի ուղղորդող դերը կայանում է նրանում, որ հնարավորինս ապահովի խմբի ներսում բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը դասընթացին: Այս ամենից ելնելով՝ սովորողները պետք է զարգացնեն բարձր պատասխանատվություն սեփական սկզբունքների հանդեպ, որպեսզի խմբային ուսուցումը հաջողություն ունենա: Արդյունքում բարձրանում է սովորողի ինքնագնահատականը, և նա դառնում է ավելի ինքնավստահ: Շատ կարևոր է նաև շրջապատող միջավայրը: Երբ խմբում հարմարավետ, լուսավոր միջավայր է, մասնակիցները գործում են ավելի վստահ, ձգտում են սովորել և ստեղծագործել:

Գործնական համատեքստ

Ես անց եմ կացրել երեք դաս 8-րդ դասարանում << Կենսագործունեության գործընթացների կարգավորումը >> թեմայից , կիրառել եմ տարբեր մեթոդներ ,բայց շեշտադրում եմ կատարել հատկապես խմբային ուսուցման մեթոդի վրա ,պարզելու համար , թե կարող եմ արդյոք նման եղանակով հասնել ավելի լավ արդյունքների և երեխաների մոտ մեծացնել հաջորդ փոխկապակցված դասերն ավելի լավ ընկալելու հնարավորությունը:

Օրվա դասի պլան /դաս 1-ին/

Ամիս, ամսաթիվ 05/09/2022

դասարան

տևողությունը՝ 45 րոպե

Դասարան՝ 8-րդ

Դասի

Դասի թեման՝ Օրգանիզմների կենսագործունեության գործընթացների կարգավորումը

Դասի նպատակները՝

ա/ ակադեմիական

Աշակերտը կիմանա .

- կարգավորման ձևերը
- կարգավորման եղանակների փոխկապակցվածության մասին
- հորմոնների մասին
- ինքնակարգավորման բջջային մակարդակի մասին

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել ռեֆլեքսը
- համեմատել կարգավորման տեսակներն իրար հետ
- բնութագրել հորմոնները, բերել օրինակներ
- հիմնավորել հումորալ և նյարդային կարգավորման առավելություններն ու թերությունները:

բ/սոցիալական

- Աշակերտների մոտ կձևավորվի հարուստ արժեհամակարգ՝ համագործակցելու, հաղորդակցվելու, բանավիճելու, միմյանց լսելու, հարգելու, միմյանցից սովորելու կարողություններ և հմտություններ:
- Կկարևորի

1. կարգավորման կենսաբանական նշանակությունը,

2. նյարդային կարգավորումը որպես կարգավորման ավելի կատարյալ եղանակ

Անհրաժեշտ պարագաներ` թեմային վերաբերվող
ցուցապաստառներ, լուսանկարներ, տեսաֆիլմեր և սահիկաշար:

Յիմնական հասկացություններ`

կարգավորում, հոմեոստազ, հորմոն, նյարդահումորալ կարգավորում

Դասի ընթացքը

Խթանման փուլ /10րոպե/

Մինչ բուն թեմային անցնելը` առանձին հարցադրումներով, նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է անդրադարձ անցած նյութին և վերհանվում աշակերտների ունեցած գիտելիքներն ուսումնասիրվելիք դասանյութի վերաբերյալ: Այնուհետև գրատախտակի կենտրոնում ուսուցիչը գծում է 3 շրջանակ` ճառագայթներով, և առաջարկում «Մտագրոհիտ մեթոդով ուսուցչի ուղղորդմամբ, նշել շրջանակներում 7-րդ դասարանում անցած նյարդային համակարգերի տեսակները անվանումներ: Ուսուցիչը գրի է առնում բոլոր հնարավոր պատասխանները: Իսկ ճառագայթների վրա այն կարգաբանական խմբերը, որոնք ունեն այդ ՆՅ-ը:

Խմաստի ընկալման փուլ/15րոպե/

Իրականացվում է խմբային աշխատանք, որի համար աշակերտները բաժանվում են 3 խմբերի:: Այսպես` խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվում է նյութի մի մասը

1. Առաջին խումբ` նկարագրել հումորալ կարգավորումը, նշել առանձնահատկությունները
2. Երկրորդ խումբ` նկարագրել նյարդային կարգավորման առանձնահատկությունները
3. Երրորդ խումբ` ներկայացնել դասանյութում առկա նոր եզրույթները:

խմբերից մեկը ներկայացնում է առանձնահատկությունները, 3-րդ խումբը արդ ընթացքում ներկայացնում է օգտագործված եզրույթի բացատրությունը

Ապա 2-րդ խումբն է միասին աշխատում 3-րդ խմբի հետ:

Կշռադատման փուլ /5րոպե/

Չանրագումարի են բերվում ստացած գիտելիքները: Խմբերը նախապես կազմած իրենց հարցերն ուղղում են միմյանց, ստացված պատասխանները համադրում հումորալ և նյարդային կարգավորումների բնութագիրն ամբողջացնելու նպատակով: Արդյունքները համագումարի բերելուն հաջորդում է T-աձևաղյուսակի կիրառումը, որի օգնությամբ աշակերտները կարողանում են համեմատել և միմյանց հակադրել այդ երկեւ կարգավորման եղանակները:

ՉՈՒՄՈՐԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	ՆՅԱՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ
1. Իրականացվում է կենսաբանական ակտիվ նյութերի, հորմոնների միջոցով: 2. Հորմոնների փոխադրման արագությունը 0,5 մ/վ 3. Տարածվում է ամբողջ մարմնով և ազդում տարբեր գործընթացների վրա 4. Ավելի հին է	1. Իրականացվում է ռեֆլեքսների միջոցով: 2. Չաղորդման արագությունը 120մ/վ է 3. Ավելի ճշգրիտ է , հստակ և ուղղված որոշակի օրգանին կամ հյուսվածքին: 4. Նոր է և ավելի կատարյալ

Կատարված աշխատանքի վերջնարդյունքները պարզելու նպատակով՝ մենք կատարեցինք նաև թեստային աշխատանք՝ երեխաներին տրվեցին երեք տարբերակով թեստային առաջադրանքներ:

Գնահատման փուլ /5ր/

Կատարվում է փոխադարձ գնահատում խմբերի միջև, որի ժամանակ յուրաքանչյուր խումբ հիմնավորում է իր ասած գնահատականը:

Տնային աշխատանքի հանձնարարում /5ր/

Գծապատկերի միջոցով ներկայացնել նյարդահումորալ մեխանիզմի հիմքում ընկած ինքնակարգավորման սզկբունքը

Օրվա դասի պլան /դաս 2-ին/

Ամիս, ամսաթիվ 07.09.2022

Դասարան՝ 8րդ

Դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի թեման՝ Ներգատական և խառը գեղծերի գործառույթները, նրանց խանգարումները

Դասի նպատակները՝

ա/ ակադեմիական

Աշակերտը կիմանա

- Գեղծերի տեսակները, առանձնահատկությունները
- Թեր և գերգործառույթների ժամանակ առաջացող հիվանդությունները
- Տարբեր գեղծերի կողմից արտադրվող հորմոնները

Կկարողանա

- Թվարկել ներգատիչ, արտագատիչ և խառը գեղծերը
- Ներկայացնել որոշ հիվանդությունների ախտանիշները
- Հիմնավորել ներկայացվող հիվանդությունների առաջացման պատճառները

բ/սոցիալական

Աշակերտների մոտ կձևավորվի հարուստ

արժեհամակարգ՝ համագործակցելու, հաղորդակցվելու, բանավիճելու, միմյանց լսելու, հարգելու, միմյանցից սովորելու կարողություններ և հմտություններ:

Կկարևորի

- Հումորալ կարգավորման կենսաբանական նշանակությունը,
- Հորմոնների դերը օրգանիզմի կենսագործունեության գործընթացների կարգավորման մեջ

Անհրաժեշտ պարագաներ`

թեմային վերաբերվող ցուցապաստառներ, լուսանկարներ, տեսաֆիլմեր և սահիկաշար:

Յիմնական հասկացություններ` վահանագեղձ ,թիրօքսին ,հիպոֆիզ ,գաճաճություն ,լորձայտուց ,տեղային խպիպ ,բազեդովյան հիվանդություն ,բրոնզախտ ,ադրենալին ,ինսուլին ,գլյուկագեն

Դասի ընթացքը

Խթանման փուլ /10 րոպե/

Մինչ բուն թեմային անցնելը` առանձին հարցադրումներով, նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է անդրադարձ անցած նյութին և վերհանվում աշակերտների ունեցած գիտելիքներն ուսումնասիրվելիք դասանյութի վերաբերյալ: «Մտագրոհիտ մեթոդով ուսուցչի ուղղորդմամբ գրատախտակի կենտրոնում գրվում է հորմոն բառը և կենտրոնից դուրս ելնող ճառագայթների վրա գրվում է հորմոններին բնութագրող առանձնահատկությունները:

Իմաստի ընկալման փուլ /15 րոպե/

Իրականացվում է խմբային աշխատանք, որի համար աշակերտները բաժանվում են

4 խմբերի:: Այսպես` խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվում է նյութի մի մասը

1. Առաջին խումբ` ներկայացնել մակուղեղ, հորմոնը , ինչպես նաև հորմոնի քիչ կամ հավելյալ քանակի դեպքում դիտվող հիպոնդությունները ,նշել թե որ տարրում է դիտվում չափահաս կամ մանկական հասակում ;

2. Երկրորդ խումբ` ներկայացնել վահանագեղձը, հորմոնը , հորմոնի քիչ կամ հավելյալ քանակի դեպքում դիտվող հիպոնդությունները ,նշել թե որ տարիքում է դիտվում չափահաս կամ մանկական հասակում ;

3.Երրորդ խումբ՝ Ներկայացնել մակերիկամը ,կեղևային և միջուկային շերտերի հորմոնները , հորմոնի քիչ կամ հավելյալ քանակի դեպքում դիտվող հիվանդությունները ,և՛ել թե որ տարիքում է դիտվում չափահաս կամ մանկական հասակում ;

4.Չորրորդ խումբ՝ Խառը գեղձեր ՝ենթաստամոքսագեղձ, սեռական գեղձեր :Ներկայացնել խառը գեղձերի արտազատիչ և ներզատիչ գործառույթները ,հորմոնները ,հիվանդությունները

Կշռադատման փուլ /5րոպե/

Չանրագումարի են բերվում ստացած գիտելիքները: Խմբերը նախապես կազմած իրենց հարցերն ուղղում են միմյանց, ստացված պատասխանները համադրում հումորալ և նյարդային կարգավորումների բնութագիրն ամբողջացնելու նպատակով: Արդյունքները համագումարի բերելուն հաջորդում է և արյունակի կիրառումը, որի օգնությամբ աշակերտները կկարողանան հանրագումարի բերել ստացված գիտելիքները

<p>Գեղձի անունը, տեղը օրգանիզմում</p>	<p>հորմոնը</p>	<p>հիվանդությունները ,ախտանիշները</p>	<p>որ տարիքում է դիտվում թեթե գերգործառույթ է</p>
---	----------------	---	--

<p>1.Մակուղեղ գտնվում է գլխուղեղի ստորին մասում</p>	<p>աճի հորմոն</p>	<p>1.թզուկություն՝փոքր չափեր,որի դեպքում չի խախտվում մարմնի համաչափությունը և մտավոր ունակությունները</p> <p>2.հսկայություն՝2,5-ից-2,6մ հասակ</p> <p>3.ակրոմեգայա՝ մարմնի ծայրանդամների մեծացում</p>	<p>թերգործառույթ մանկական հասակում</p> <p>գերգործառույթ մանկական հասակում</p> <p>գերգործառույթ չափահաս տարիքում</p>
---	-------------------	--	---

Ու այսպես լրացնում ենք դասագրքում գետնոված բոլոր գեղծերի մասին եղած կյուղը:

Գնահատման փուլ /5ր/

Կատարվում է փոխադարձ գնահատում խմբերի միջև,որի ժամանակ յուրաքանչյուր խումբ հիմնավորում է իր ներկայացված գնահատականը:

Տնային աշխատանքի հանձնարարում /5ր/

Մակերիկամների և ենթաստամոքսագեղծի հորմոնները ինչպես են ազդում ածխաջրերի փոխանակության վերաբերյալ :

Օրվա դասի պլան /դաս 3/

Ամիս, ամսաթիվ 12.09.2022

դասարան

տևողությունը՝ 45 րոպե

Դասարան՝ 8-րդ

Դասի

Դասի թեման՝ Նյարդային համակարգի նշանակությունը և կառուցվածքը

Դասի նպատակները՝

ա/ ակադեմիական

Աշակերտը կիմանա

- Նյարդային համակարգի նշանակությունը
- Նյարդային հյուսվածքի, նեյրոնի կառուցվածքը
- Սինապսների դերը

Կկարողանա

- Տարբերել ծայրամասային և կենտրոնական նյարդային համակարգերը
- Բնութագրել նյարդերը, նյարդային հանգույցները, նեյրոնները
- Ներկայացնել նեյրոնների և նյարդերի տիպերը ըստ գործառական բնույթի

բ/սոցիալական

Աշակերտների մոտ կձևավորվի հարուստ

արժեհամակարգ՝ համագործակցելու, հաղորդակցվելու, բանավիճելու, միմյանց լսելու, հարգելու, միմյանցից սովորելու կարողություններ և հմտություններ:

Կկարևորի

Նյարդային համակարգի դերը մարդու գիտակցության, վարքի, խոսքի և մտածողության ձևավորման մեջ:

Անհրաժեշտ պարագաներ՝ թեմային վերաբերվող

ցուցապաստառներ, լուսանկարներ, տեսաֆիլմեր և սահիկաշար:

Հիմնական հասկացություններ` նեյրոն ,աքսոն ,միելինային թաղանթ ,սինապս ,սյարդային հանգույց

Դասի ընթացքը

Խթանման փուլ /10րոպե/

Առանձին հարցադրումներով, նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է անդրադարձ անցած նյութին և վերհանվում աշակերտների ունեցած գիտելիքներն ուսումնասիրվելիք դասանյութի վերաբերյալ: «Մտագրոհիտ մեթոդով ուսուցչի ուղղորդմամբ, վերհիշում ենք կենդանիների սյարդային համակարգի բարդացումը տարբեր էվոլյուցիոն խմբերի մոտ և զուգահեռաբար նաև բարդ վարքի տարբեր դրսևորումները :

Իմաստի ընկալման փուլ/15րոպե/

Իրականացվում է խմբային աշխատանք, որի համար աշակերտները բաժանվում են 3 խմբերի: Այսպես՝ խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվում է նյութի մի մասը

1. Առաջին խումբ՝ նկարագրել սյարդային համակարգի կառուցվածքը ,
2. Երկրորդ խումբ՝ սյարդային հյուսվածքի , նեյրոնի կառուցվածքը
- 3.Երրորդ խումբ՝ ներկայացնել նեյրոնների և սյարդերի տիպերը ըստ իրենց կատարած գործառույթի :

Կշռադատման փուլ /5րոպե/

Հանրագումարի են բերվում ստացած գիտելիքները: Խմբերը նախապես կազմած իրենց հարցերն ուղղում են միմյանց, ստացված պատասխանները համադրում: Արդյունքները համագումարի բերելուն հաջորդում է սխեմայի կազմումը:

Նյարդային համակարգ

|

|

Կենտրոնական համակարգ

Ծայրամասային համակարգ

| | | | |
գլխուղեղ ողնուղեղ նյարդեր նյ հանգույցներ սինափսներ ընկալիչներ

Կազմել երկրորդ սխեման նյարդային հյուսվածքի վերաբերյալ

Նյարդային հյուսվածք
| |
նեյրոն ուղեկից բջիջներ
| |
մարմին ելուստներ
| |
աքսոն դենտրիտ

Կատարված աշխատանքի վերջնարդյունքները պարզելու նպատակով՝ մենք կատարեցինք նաև թեստային աշխատանք՝ երեխաներին տրվեցին երեք տարբերակով թեստային առաջադրանքներ:

Գնահատման փուլ /5ր/

Կատարվում է փոխադարձ գնահատում խմբերի միջև,որի ժամանակ յուրաքանչյուր խումբ հիմնավորում է իր ասած գնահատականը:

Տնային աշխատանքի հանձնարարում /5րոպե/

Գրել հողաթափիկ ինփուզորիայի ,սպիտակ պլանարիայի ,անձրևորդի ,մայիսյան բզեզի ,ճարպիկ մողեսի ,ընտանի շան նյարդային համակարգերի տեսակները ;

Եզրակացություն

Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան, այն ինդիկատորները և նպատակները(ակադեմիական,սոցիալական) որ դրել էի իմ առջև, այս դասի թեմայի շրջանակներում ինձ հաջողվեց, շնորհիվ՝ դասի կազմակերպման ոչ ավանդական ձևի՝ԽԻԿ համակարգի և կիրառված խմբային ուսուցման ձևերի: Աշակերտները դասընթացի ժամանակ ձեռք բերեցին ոչ միայն գիտելիքներ, այլ նաև նրանց մոտ ձևավորվեցին հմտություններ և բազմակողմանի կարողություններ,որը նրանց հնարավորություն կտա գործնականում կիրառելու: Համոզված եմ,որ դասընթացի կազմակերպման խմբային ուսուցման ձևերը դրական արդյունքներ կարձանագրի նաև այլ դասերի ժամանակ և այլ դասարաններում :

Գրականության ցանկը

<https://urok.1sept.ru/articles/530702>

<https://e-koncept.ru/2017/771020.htm>